



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“23” ԾԵՂԻՍԷՔ 2024թ.

N 37 - Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՎՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԱՀՄԱՆ ՈՒ
ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղքատության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.2-րդ հոդվածի 1-ին մասի 4.1) կետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- Հաստատել կենսաքայքայվող թափոնների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5/23/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան

**ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՎՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԱՀՄԱՆ ՈՒ
ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող կենսաքայքայվող թափոնների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգը:

2. Սույն ընթացակարգի ընդունումը բխում է շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմանների ապահովման, երկրորդային ռեսուրսների օգտագործման անհրաժեշտությունից, ինչպես նաև ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումների ու ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի դրույթներով ստանձնած ՀՀ պարտավորություններից և «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N464-Լ որոշման հավելվածով հաստատված ռազմավարության կիրարկումն ապահովող 3.3 միջոցառման կատարման անհրաժեշտությունից:

3. Սույն ընթացակարգը տարածվում է կենսաքայքայվող թափոն գոյացողների, դրանց հավաքման, տեղափոխման և օգտահանման հետ առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց, համայնքների և օպերատորների վրա:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Համաձայն թափոնների բաղադրության ուսումնասիրությունների՝ ըստ կշռի հանրապետությունում գոյացող աղբի շուրջ 48-52%-ը՝ կենսաքայքայվող թափոնն է, որի տեղադրումն աղբավայրերում հանգեցնում է չափազանց մեծ բացասական հետևանքների, ներառյալ ջերմոցային գազերի արտանետումների, ստորերկրյա և մակերևութային ջրերի, հողի և մթնոլորտի աղտոտվածության, ինչպես նաև տհաճ հոտի ու հրդեհների բռնկման:

5. Հաշվի առնելով այն փաստը, որ հանրապետությունում գործող աղբավայրերը շահագործվում են առանց նեխաջրերի և գազերի համար նախատեսված վերահսկման և կառավարման համակարգերի՝ անհրաժեշտություն է առաջանում և կարևորվում կենսաքայքայվող թափոնը աղբավայրերում չտեղադրելը կամ դրանց քանակը հնարավորինս նվազեցնելը:

6. Աղբավայրում տեղադրվող կենսաբանական քայքայման ենթակա թափոնի քանակի նվազեցումը հանդիսանում է աղբահանության կայուն համակարգի զարգացման որդեգրած քաղաքականության գերակայություն՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբավայրերում տեղադրվող աղբի բացասական և վտանգավոր ներգործության նվազեցմանն ու չեզոքացման նպատակով:

7. Հաշվի առնելով գոյացող կենսաքայքայվող թափոնների ծավալը՝ դրանց տեսակավորված հավաքումը և օգտահանումը զգալի կնվազեցնի նաև աղբահանության ծառայությունների ծախսերը:

8. Կենսաքայքայվող թափոնը՝ կյանքի ցիկլի ընթացքում բնական քայքայվող աղբն է, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունը իր արտադրության, վերամշակման, օգտագործման կամ պահպանման գործընթացում: Այսինքն՝ բույսերի և կենդանիների թափոնները, որոնք հեշտությամբ կենսաբանորեն քայքայվում են (սննդի մնացորդներ և մնացորդներ սննդի պատրաստման կամ մշակման գործընթացներից, ժամկետանց սննունդ, այդ թվում՝ շուկայից, խանութներից ու սննդի օբյեկտներից, խոտածածկ տարածքների սանմաքրման, ծառերի և թփերի էտման, արդյունքում առաջացող մնացորդները, չորացած ծաղկեփնջերը և այլն):

9. Սույն ընթացակարգի սահմանմամբ նախատեսվում է նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում կենսաքայքայվող թափոնների առանձին հավաքման,

տեղափոխման, պահման ու հեռացման համար՝ նպատակաուղղված հանրապետության տարածքում կենսաքայքայվող աղբի օգտահանման ապահովումը, աղբավայրեր փոխադրվող օրգանական ծագման թափոնների քանակի և աղբավայրերից անջատվող ջերմոցային գազերի քանակի նվազեցմանը:

10. Սույն ընթացակարգով սահմանված կենսաքայքայվող թափոնների կուտակման, հավաքման, տեղափոխման, պահման, հեռացման և օգտահանման գործընթացներում իրականացվում են գոյացող, հեռացվող (ոչնչացվող, վնասագերծվող, տեղադրվող) և օգտահանվող թափոնների հաշվառում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի «Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» թիվ 1343-Ն որոշման:

3. ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՎՈՂ ԱՂԲԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ, ՀԱՎԱՔՈՒՄԸ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

11. Կենսաքայքայվող թափոն գոյացնողն է իրականացնում դրա կուտակման գործընթացը:

12. Կենսաքայքայվող թափոնն առաջարկվում է կուտակել հատուկ դրա համար նախատեսված աղբամաններում՝ առանձին կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններից:

13. Կենսաքայքայվող թափոնի կուտակման նպատակով անհրաժեշտ է կիրառել առաձին 0.4-1.1լ տարողությամբ հարթ մակերևույթով, փակ կափարիչով գունավորված աղբամաններ/կոնտեյներներ (շականակագույն):

14. Աղբամանների աղտոտումից խուսափելու նպատակով կարող են տեղադրվել կենսաքայքայվող նյութից պատրաստված հատուկ միջնապատեր, որոնց փոխարինումը աղբամանի յուրաքանչյուր դատարկումից հետո կկանխի նաև տհաճ հոտի տարածումը:

15. Կենսաքայքայվող թափոնի կուտակման աղբամանները կարող են տեղակայել համայնքը կամ օպերատորը, ինչպես նաև իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը՝ համայնքի ավագանու սահմանած պահանջներին և սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին համապատասխան:

16. Կենսաքայքայվող թափոնի կուտակման աղբամանների վրա պետք է տեղադրված լինեն տեղեկատվություն աղբի հեռացման ժամկետների, կոնտեյներների փոխադրումն իրականացնող կազմակերպության վերաբերյալ: Կենսաքայքայվող աղբի աղբամանները պետք է դատարկվեն առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ $+5^{\circ}\text{C}$ և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր:

17. Կենսաքայքայվող թափոնի կուտակման աղբամանները ենթակա են լվացման և ախտահանման՝ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 25-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

18. Կենսաքայքայվող թափոնի տեղափոխումը կուտակման վայրերից դեպի վերամշակման կամ օգտահանման համար նախատեսված օբյեկտներ իրականացվում է անհրաժեշտ փակ թափքով կամ փակ կցորդիչով բեռնող մեխանիզմներով ապահովված բեռնատար մեքենաներով:

19. Կենսաքայքայվող թափոնի տեղափոխումը հավաքման կետերից պետք է իրականացվի առավել արդյունավետ երթուղիներով և սխեմայով:

20. Կենսաքայքայվող թափոնի տեղափոխումն իրականացվում է նվազագույնին հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը՝ պահպանելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի պահանջները:

4. ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՎՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՌՈՒՄԸ

21. Կենսաքայքայվող թափոնների հեռացման նպատակն է դրանց վերամշակումն ու օգտահանումը: Վերամշակման արդյունքում կարող ենք ստանալ կենսագազ, կենդանիների կեր՝ կենդանիների սննդային հավելումներ և պարարտանյութ:

22. Կենսաքայքայվող թափոնների հեռացման ընթացքում, դրանց վերամշակման ու օգտահանման համար, անհրաժեշտ է իրականացնել գործընթացի նախապատրաստում՝ թափոնների մեջից հանել կենսաքայքայվող թափոն չհամարվող բաղադրիչները, ինչպես նաև մանրացնել անտառային մնացորդներում, էտման և այգեգործական թափոններում տեղ գտած խոշոր նյութերը: Միաժամանակ, որոշակի թափոնների դեպքում (օրինակ՝ սպանդանոցների թափոններ) հնարավոր է պահանջվի հարուցիչների ոչնչացում/հիգիենիկ մաքրում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշմամբ սահմանված կարգի:

23. Կենսաքայքայվող թափոնների օգտահանումն ու վերամշակումն իրականացվում է աէրոբ կամ անաէրոբ խմորման, ջերմային մշակման տեխնոլոգիաներով:

24. Կենսաքայքայվող թափոնների **ջերմային մշակման** ընթացքում անհրաժեշտ է առանձին հավաքել, տեսակավորել, ապա չորացնել կենսաքայքայվող թափոնը: Չոր շփման պատճառով այն ենթարկվում է բարձր ճնշման և ջերմաստիճանի կարճատև ազդեցության: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ բարձր մարսողությամբ կենդանիների կերեր: Աշխատանքային բարձր ջերմաստիճանը հնարավորություն է տալիս ձեռք բերել գործնականում ստերիլ արտադրանք:

25. **Անաէրոբ քայքայումը** թափոնների օրգանական մասի տարրալուծումն է՝ ազատ թթվածնի բացակայությամբ, ինչը հանգեցնում է կենսազազի արտադրության և լայնորեն օգտագործվում է որպես վերականգնվող էներգիայի աղբյուր: Արդյունքում արտադրվում է կենսազազ, որը բաղկացած է մեթանից և ածխաթթու գազից: Այս տեխնոլոգիան մեծ ներդրումներ է պահանջում և կիրառվում է հիմնականում արտադրական ծավալներով և համակարգված կենսաքայքայվող թափոնների հավաքման մեխանիզմների առկայության դեպքում:

26. Կենսաքայքայվող թափոնների անաէրոբ տարրալուծումը պետք է իրականացվի այնպես, որ 24 ժամ առանց ընդհատման տարրալուծման ռեակտորում պահպանվի առնվազն 55 °C ջերմաստիճան և ռեակտորում հիդրավլիկ դիմացկունության ժամանակը լինի առնվազն 20 օր:

27. Եթե ռեակտորի աշխատանքային ջերմաստիճանը ցածր է 26-րդ կետում նշված ջերմաստիճանից կամ, եթե ռեակտորի հիդրավլիկ դիմացկունության ժամանակը ավելի կարճ է, քան 26-րդ կետում նշված ժամանակն է, ապա անհրաժեշտ է, որ.

1) կենսաքայքայվող թափոնները նախնական ջերմային մշակման ենթարկվեն առնվազն մեկ ժամվա ընթացքում, առնվազն 70 °C ջերմաստիճանում կամ,

2) անաէրոբ տարրալուծման ավարտից հետո տիղմի նստվածքը առնվազն մեկ ժամ ջերմային մշակման ենթարկվի առնվազն 70 °C ջերմաստիճանում, կամ

3) անաէրոբ տարրալուծման ավարտից հետո փտած տիղմը լրացուցիչ մշակվի կոմպոստացման միջոցով:

28. Կենսաքայքայվող թափոններից կենսագազի անջատման կայաններում կեղտաջրերի արտահոսքը և մաքրումը պետք է իրականացվեն բնապահպանական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

29. Աէրոբ քայքայում կամ կոմպոստացումը տեխնոլոգիա է, որի ընթացքում թթվածնի, ջերմաստիճանի, խոնավության պարունակության և թափոնների հատկությունների կարգավորմամբ արտադրվում է կենսահումուս/պարարտանյութ, որը հանդիսանում է հողի վերականգման արդյունավետ միջոց:

30. Կոմպոստը, մասնավորապես կիրառվում է գյուղատնտեսական գործունեության, այգեգործության և կանաչապատման աշխատանքների, ռեկուլտիվացման աշխատանքներում և տնային այգեգործության մեջ: Կոմպոստացման մնացորդները կարող են նաև օգտագործվել որպես կենսաբանական ֆիլտրում իրականացնելու համար անհրաժեշտ նյութեր:

31. Կոմպոստացման ամենապարզ տեխնոլոգիան շարքերով կոմպոստացումն է (windrow composting): Այս մեթոդը հարմար է կենսաքայքայելի նյութերի մեծ ծավալների վերամշակման և մեծ քանակությամբ կոմպոստի արտադրության համար: Այս տեխնոլոգիան պահանջում է ցածր նախնական ներդրում և սպասարկման քիչ ծախսեր:

32. Կոմպոստավորման մեկ այլ տեխնոլոգիան՝ բարձր ջերմաստիճանում և խոնավ միջավայրում բակտերիաների, միջատների, սնկերի և որդերի օգտագործումն է, որոնց ազդեցությամբ տեղի է ունենում օրգանական թափոնների քայքայում առավել կարճ ժամանակահատվածում:

33. Կոմպոստացումը կարող է իրականացվել բացօթյա կամ փակ (տարաներում օպտիմալ օդափոխման, ջերմաստիճանի և խոնավության պայմաններում գործընթացը արագացնելու նպատակով) եղանակով՝ և՛ կենտրոնացված, և՛ մասնավոր բակային ձևով:

34. Կոմպոստացման կայանները կարող են կազմակերպվել ցանկացած վայրում: Կարող են լինել փոքր ծավալների՝ կիրառվել տնային տնտեսության կողմից՝ նվազագույնը 1խմ տարածքում կամ տարաների մեջ: Կարող են լինել ավելի մեծ՝ արտադրական ծավալների՝ համակարգված կենսաքայքայվող աղբի հավաքման ու տեղափոխման մեխանիզմների առկայության դեպքում:

35. Կոմպոստավորման գործընթացի համար անհրաժեշտ է ընտրել տեղը՝ պաշտպանված արևի ճառագայթների անմիջական ազդեցությունից և քամիներից: Ցանկալի է կոմպոստային կույտը տեղադրել բարձր տեղում, տեղանքի պատերից 3մ -ից ոչ պակաս և խմելու ջրամատակարարման կառույցներից հեռավորությունը սահմանվում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանով հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան:

36. Կոմպոստավորման համար չեն օգտագործվում հիվանդություններով վարակված բույսերը, մսի, ձկան, յուղի, կաթնամթերքների մնացորդները, քիմիկատները, թարմ գոմաղբը և այլն:

37. Կոմպոստի պատրաստման համար օգտագործվում են «կանաչ» և «դարչնագույն» նյութեր: Դարչնագույն (ածխածնային) նյութերը կոմպոստը հարստացնում են օդով և ածխածնով, իսկ կանաչները (ազոտայինները)՝ ազոտով և ջրով: Կոմպոստի ստեղծման համար պետք է հերթագայել դարչնագույն և կանաչ նյութերի շերտերը: «Կանաչ» բաղադրիչները պարունակում են ազոտի (N) և խոնավության մեծ քանակ, դրանց պատկանում է նաև գոմաղբը, չնայած որ այն կանաչ չէ: «Դարչնագույն» բաղադրիչները մեծ քանակով ածխածին են (C) պարունակում, որպես կանոն գտնվում են չոր վիճակում:

1) «դարչնագույն» բաղադրիչներ են՝

- ա. չոր տերևներ և ճյուղեր,
- բ. ծղոտ, բույսերի չորացած մնացորդներ,
- գ. թուղթ, ստվարաթուղթ,
- դ. թեփ, ծառի կեղև,

2) «կանաչ» բաղադրիչներն են

- ա. բանջարեղենային, մրգային մնացորդներ,
- բ. կանաչ խոտ, տերևներ, կանաչ ճյուղեր,
- գ. մոլախոտեր (առանց սերմերի), ջրիմուռներ,

դ. սուրճի, թեյի նստվածք:

38. Կոմպոստավորման պրոցեսի տևողությունը 3-6 ամիս է: Կոմպոստավորման տարողությունը լցնում են հետևյալ հերթականությամբ.

1) տարողության ամենաներքևում դնել չոր ճյուղերի, ծղոտի, թեփի շերտ: Այդ նյութերը անհրաժեշտ են ջրահեռացման և օդի ներթափանցման ապահովման համար,

2) երկրորդ շերտում (20-25 սմ բարձրությամբ) դնել «կանաչ» բաղադրիչները (կանաչ բույսեր կամ բանջարեղենի ու մրգերի մնացորդներ և այլն),

3) երրորդ շերտում (5սմ բարձրությամբ)՝ «դարչնագույն» բաղադրիչները (մանրացված թուղթ, ստվարաթուղթ, չոր ճյուղեր և այլն),

4) չորորդ շերտը՝ քիչ քանակությամբ հող,

5) հաջորդ շերտերը՝ «կանաչ» և «դարչնագույն» շերտերն են: Անհրաժեշտ է հերթագայել՝ «թաց», «չոր», «պինդ» և «փափուկ» շերտերը: Դա կապահովի շերտերի օդափոխությունը, պրոցեսի արագացումը, իսկ հետագայում նաև պատրաստի կոմպոստի որակը:

39. Կոմպոստավորման համար օգտագործվում են տարբեր ձևերի տարողություններ, որոնք պատրաստված են լինում փայտե տախտակներից կամ մետաղական ցանցից: Կարելի է օգտագործել նաև տակառներ: Կոմպոստային կույտը կարելի է տեղադրել նաև հողի վրա, առանց որևէ տարողություն՝ օգտագործելով փտած գոմաղբ,

40. Չի կարելի խառնել կամ խտացնել կոմպոստի պարունակությունը, քանի որ դա կխախտի կոմպոստի առաջացման նորմալ պրոցեսը:

41. Արտադրական կոմպոստացման կայանները կարող են տեղակայվել այնպիսի վայրերում, որտեղ գեներացվում են համապատասխան թափոնները և այն վայրերում, որոնք ճանապարհային մատչելիություն ունեն և հասանելի են տրանսպորտային ցանցի համար, ինչը կոմպոստային արտադրանքի հեշտ իրացման հնարավորություն կդառնա:

42. Արտադրական կոմպոստավորման՝ մեծ ծավալների կայանների դեպքում պարտադիր պետք է պահպանվի նաև բնակելի տարածքներից նվազագույն հեռավորությունը՝ 500մ, որպեսզի հնարավոր լինել խուսափել վատ հոտերի, կրծողների կամ այլ անցանկալի վնասատուների հնարավոր ազդեցությունից:

43. Գոյություն ունեն նաև թափոնների կոմպոստավորման այլ միջոցներ: Ստացված կոմպոստը օգտագործվում է որպես օրգանական պարարտանյութ: Կոմպոստի

օգտագործումը նպաստում է բերքատվության բարձրացմանը, ինչպես նաև պտուղների ավելի արագ հասունացմանը: Կոմպոստի օգտագործմամբ աճեցված արտադրանքը էկոլոգիապես մաքուր է:

5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

44. Համայնքը կամ օպերատորը աշխատանքներ է տանում բնակչության և տնտեսվարող սուբյեկտների շրջանակներում (օրինակ՝ կենսաքայքայվող թափոնների առանձնացված հավաքման վերաբերյալ ռեստորանների, հյուրանոցային համալիրների, սննդի վաճառքի ու վերամշակման և այլ կազմակերպությունների հետ պայմանավորվածություն ձեռք բերելով)՝ իրականացնելով իրազեկման լայնածավալ աշխատանքներ և համայնքի ավագանու սահմանած պահանջներին ու սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան, բնակելի տարածքներում տեղադրում կենսաքայքայվող թափոնների առանձին հավաքման համար աղբամաններ, կազմակերպում դրանց հավաքումն ու տեղափոխումը:

45. Համայնքը կամ օպերատորը, ինչպես նաև իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը համայնքի ավագանու սահմանած պահանջներին և սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան կազմակերպում է կենսաքայքայվող թափոնների հեռացումը, այդ թվում՝ դրանց վերամշակումը և օգտահանումը:

46. Վերամշակման արդյունքում ստացված արտադրանքը հնարավոր է կիրառել շուկայում, իսկ կոմպոստի դեպքում՝ ստացված պարարտանյութն օգտագործել համայնքային այգիների, պուրակների և կանաչ այլ տարածքների հողերի հարստացման նպատակով: